

«H. F. B. Lynch» իր «Armenia» մեծ աշխատութեան մէջ  
Կարնոյ Անդլ . հիւսաւորութեան թայտորէն ծանօթութիւն մը առաջ  
կը բերէ . «Էրզրումի Քիւրդերը զազթած են Տիարպէքիբի  
չըջականերէն և «Մամականդու» ցեղը միայն՝ որոնց համար  
կ'ըսուի թէ սերած են Հայոց Մամիկոնեաներէն՝ երկրին բնիկ-  
ներն են» : (\*)

## ՔԻԻՐԴԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒՅԻՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽՈՂ  
ՔԻԻՐՏ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

(Հայացած Քիւրդեր կամ Հայ-Քիւրդեր: Ամասուցիք  
կամ Վաչուսանք :)

Հայ պատմութեան մեր սրտումներու ատեն Քիւրդ անուան  
առաջին անգամ կը պատահինք Ռուբինեանց իշխանութեան  
ժամանակ Հեթում Ա. ի ուղեւորութեան մէջ , որը Սելջուկեան-  
ներու դէմ յանձն առած արշաւանքի համար՝ թախարհներու  
մեծ առաջխաղացութիւնը տեսնելով զնաց անոնց Մանգոյ  
խանին հետ դաշն կապելու :

(\*) Եավրցիք . այժմ (Եավլի աշիրաթի) կը բնակին Վանայ հիւսիս  
արեւմուտք թիմարի շրջանը . տանք 200 տան մօտ Քիւրդեր են զազթած  
Պօհտանէն . իրենք են դարձեալ որ ինքզինքնին կը համարին սերած  
Հայերէ , այժմ Պօհտանի մէջ կայ Եելվի անուն վանք մը և անոնք այդ  
վանուց ժողովուրդը լինելով , այդ անունով ևս կը կոչուին Եավրցի :

Իրենց մէջ սովորութիւն ունին , որ ցեղի անունը կամ յիշատակու-  
թիւնը չկորսնցնեն : Այժմ իսկ Եելվի Աշիրաթին պատկանող Տէրէ-Պէյ  
անուն գիւղի բնակիչներէն Մուստաֆայի որդի Մահմուտը , հօր անունով  
չի ճանչցուիր , այլ ցեղին՝ որ կը կոչուի «Մահմուտէ Մուքօ» (Մուքօ—  
Միքայէլի կրճատումն է) : Բոլոր ցեղը յայտնի կը խոստովանին իրենց  
Հայ սերունդէ լինելը :

(Տեղեկութիւնները քաղուած այդ շրջանի նախկին Միւտիք  
Յ. Խոստիկեանէ .)